



Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատրիարքի հրաժարականը և սահմանադրու-
թիւնը.— Ներքին Տեսութիւն. Բանտարական գոր-
ծադու Պետերբուրգում. Նամակ Գանձատարից.
Ներքին լուրեր.— ԱՍՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վեր-
ջին տեղեկութիւններ. Կրեմլ. Թիւրքիա. Նամակ
Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.— Հետ-
գիւրներ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից:

ՊԱՏՐԻԱՐԻ ՀՐԱՌԱՐԱԿԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԱ- ԴՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսից, Ռուսաց գործակալութեան
միջոցով ստացվող հեռագրերը մէկը
միւսից աւելի տխուր, մէկը միւսից աւելի
յուզելի են: Բ. Գուռը, ինչպէս պարզ երե-
ւում է այդ հեռագրերից և թղթակի-
ութիւններից, այժմ իր բոլոր նպատակ-
ներին աւելացրել է էլի մի նպատակ՝ տա-
պալել Մատթէոս պատրիարք իշխմանին,
ասպարէզից հեռացնել խառն ժողովի ան-
կախ անդամներին, և վերադարձնել թիւր-
քաց հայերի կրօնական և վարչական
հիմնարկութիւնը՝ պատրիարքարանը և
Քաղաքական ու Կրօնական ժողովները Ա-
լլահիայի ընդմիջմամբ:

Ահա հէնց այդ նպատակով խառն ժո-
ղովի անդամները, առանց որ և է օրինա-
կան հիմքի, թիւրքաց ոստիկանութեան
միջնորդութեամբ յայտարարվեցին իբր
պատասխանատու լինելից խառնա-
կութիւնների համար Հայաստանում, որը ոչ
այլ ինչ է, եթէ ոչ մի կողմնակի միջոց-
նորակելու պատրիարքին, իբրեւ այդ ժողով-
ների նախագահին, շտապեցնել իր հրա-
ժարականը: Եւ օսմանեան կառավարու-
թիւնը, հակառակ ամբողջ Հայ ազգի
պատանդներին, հակառակ դեպքանական
մարմնի աջակցութեան, հասաւ իր նենդ
նպատակին՝ աջողցնելով իշխմանի հրա-
ժարականը, ինչպէս այդ երևում է յուլիսի
26-ի հեռագրից: Դրանով էլ չը բաւական
նախադր. Բ. Գուռը ցանկանում է պատ-
րիարքական դահլը բարձրացնել իր թեկ-
նածուկներից մէկին, այն է Յովհաննիսեան

արքեպիսկոպոսին, և այդ ցանկութիւնը իրա-
դրձեւում համար, թիւրքաց կառավարու-
թիւնը, ինչպէս երևում է այսօրվայ հե-
ռագրից, իր կողմից խառն ժողովի երկու
անդամ է նշանակել, ինչ աւել կուզի իր
ցանկացած մարդկանցից, որպէս զի պատ-
րիարքական տեղապահ ընտրութեան ժա-
մանակ խառն ժողովում Հայների մե-
ծամասնութիւնը իր արամադրութեան տակ
լինի:

Ովքեր են այդ մարդիկ, որոնք յանձն
են առել խառն ժողովի անդամ լի-
նել առանց Ազգային ժողովից ընտրված լի-
նելու, մենք չը գիտենք:
1863 թ. սահմանադրութեան գորու-
թեամբ՝ խառն ժողովի անդամները ընտր-
վում են Ազգային ժողովի ձեռքով և ու-
րեմն կառավարութեան կողմից որ և է մի
անգամ նշանակելը՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ
տապալումն նոյն այն սահմանադրութեան,
որ հանդիսաւոր կերպով հաստատված է
սուլթանների ձեռքով: Խառն ժողովի ան-
դամներին պատասխանատու համարելուց և
պատրիարքական հրաժարականը հրապա-
րակ երկրուց յետոյ այդ երրորդ քայլը,
այն է երկու անդամի ինքնակամ նշանա-
կելը, մի չը տեսնված ապօրինութիւն է, որ
թող է ապիս իրան Բ. Գուռը երկուսից
մէկը.— կամ պահպանեցէ սահմանադրու-
թիւնը, կամ միանգամայն ոչնչացրէ նրան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹԱՐՈՒՄ ՊԵՏԵՐԲՈՐԳՈՒՄ
(Շարժանականութիւն)

Բանտարների գործողութիւնները յիշատակված
բոլոր գործարաններում միատեսակ էին: Նրանք
սկսվեցին աշակերտների, ապա մանուկների համե-
մատաբար փոքրիկ խմբերի ձեռքով. մնացած
մասան, որը կազմում է հաշտուր մեծամաս-
նութիւն, միացաւ նրանց հետ մի փոքրիկ տա-
տանուկից յետոյ. արդէն յիշատակված է ստիպ-
մամբ աշխատանքներ դադարեցնելու մի դէպք
Ստարո-Սամսոնեան կոչված գործարանի բանտար-

ների ձեռքով. գործադու անողները իրանց պա-
հում էին կարգին, առիթ չը տալով մեղադրե-
լու նրանց կարգը խանգարելու կամ ուրիշ գոր-
ծարաններումն էլ, որտեղ աշխատանքները այդ
ժամանակ չէին ընդհատված՝ նոյն տեսակ շար-
ժում առաջ բերելու փորձեր արած լինելու
մէջ: Պետերբուրգի մնացած մասնաւոր գործա-
րանների 68,445 բանտարների ահագին բազմու-
թիւնը հեռու մնաց բամբակագործների գործա-
դուցից, նիւթական օգնութիւն չը ցոյց տալով
նրանց՝ վերահաս անգործութեան միջոցին: Գոր-
ծադուները, այդպիսով յատուկ բնաւորութիւն
ունէին և առաջ էին բերված բամբակագործա-
կան արդիւնաբերութեան առանձնայատկութիւն-
ներով:

Այնու ամենայնիւ՝ խաղաղ, բայց ապօրի-
նի կերպով իրանց պարտականութիւններից
խոյս տալը, որ բանտարները յանձն էին առել
գործարանատէրերի վերաբերմամբ, և որ շեա-
սակար էր երկու կողմերի համար եւս,— առիթ
տուեց չարամիտ անձանց՝ փորձել գործադու-
ներին քաղաքական յանցաւոր բնաւորութիւն
տալու: Հրապարակ եկան 25 տեսակ արգելված
թերթիկների դանաղաւ բովանդակութեամբ, ո-
րոնք կրում էին հետեւեալ ստորագրութիւն-
ները. «Գաղանկագիտութիւն բանտար դասակարգի
ազատութեան», «Բանտարական դասակարգութիւն»,
«Մանկավարժական դասակարգութիւն», ա-
մենաառաջինը կրում է մայիսի 30 ամսաթիւը,
իսկ ամենաշինքը՝ յունիսի 27 ամսաթիւը: Հա-
ւաստակալ կարելի է ենթադրել, որ այդ թեր-
թիկների շարագործները փորձել են օգտվել
արդէն տեղի ունեցած գործադուներից՝ նպա-
տակ ունենալով՝ սօցիալական բանտարութիւն
տալ նրանց և այդ ուղղութեամբ ղեկավարել
գործադու անողներին: Դառնալով բանտարե-
րին, աղիտատուները կրկնում են այն պահանջ-
ները, որ արդէն առաջադրել էին բնաւորները.
մասնաւոր են անում այն նպատակների վրա,
որոնց ձգտում են արեւմտեան—երօպայան
բանտարները. համոզում են հաստատ մնալ գոր-
ծադուի վրա, խոստանալով մինչև իսկ դրամա-
կան նպաստ, որը, իբր թէ, արդէն ուղարկում
թիւն ունենալ այդ նոյն բեմի վրա:

Օրվայ հարցի էութեան մէջ մտնելու ուրիշ ան-
գամական թողնելով՝ այժմ անցնենք վերոյիշեալ
գրքերից մէկին: Մեր խօսքը վերաբերում է Թէո-
բալդ Յիգելերի աշխատանքներին՝ «Der deutsche
student am Ende des 19 Jahrhunderts»: Սա մի
դասախօսութիւն է, որ նախ անցեալ ձմեռնային
սեմեստրին բազմաթիւ ունիւզիւրների ներկայու-
թեամբ կարդում էր յարգելի պրոֆէսոր Ստրաս-
բուրգի համալսարանում, և որը ժամանակին հը-
րատարակվեց նաև առանձին գրքուկով: Գասա-
նութիւնը դեռ ևս չը տպագրված գրաւել էր
ընդհանուր ուշադրութիւնը. մամուլի զանազան
կուսակցութեան պատկանող օրգանները թեր և
դէմ կարծիքներ էին յայտնում այդ մասին. նոյն
իսկ Բալիստատագուստ անուղղակի ակնարկութիւն-
ներ տեղի ունեցան: Նորբերս լոյս տեսաւ այդ
աշխատութեան 7-րդ հրատարակութիւնը, որը
ինչպէս լսեցինք, սպասվելու վրա է արդէն: Ի
նկատի ունենալով, որ Յիգելերի դասախօսութեան
մէջ չօչալվում են վերին աստիճանի կարևոր և
հետաքրքիր հարցեր, մենք կը փորձենք նրա
բովանդակութիւնը ամփոփել կերպով այստեղ ա-
ռաջ բերել:

Գասախօսութիւնը բաժանված է երկու մասի՝
1) «Das Leben des deutschen studenten» (գեր-
մանական ուսանողի կեանքը) և 2) «Das akade-
mische studium» (ձեմարանական ուսումը): Ա-
ռաջին մասում՝ առաջաբանից յետոյ յարգելի

են գերմանական բանտարները, և խորհուրդ են
տալիս բանտարներին՝ խելացի կերպով պահել
իրանց, ինչ որ արդէն բանտարները անում էին՝
նախքան թերթիկների երևան գալը, նոյն իսկ
գործադուի սկզբից: Չը սահմանափակվելով
բանտարներով, թերթիկների շարագործները դի-
մում են հասարակութեանը, հրաւեր կարդալով
նրանց միանալ ռուս սօցիալ-դեմոկրատներին:
Մի քանի թերթիկներ ուղարկված էին միւս
գործարանները, հրաւերելով աշակցել գործա-
դու անողներին և միանալ վերջինների հետ.
Երկու թէ երեք թերթիկներ ուղղված են եղել
Մոսկւայի ֆաբրիկաներին: Այդ յանցաւոր պրո-
պագանդան, սակայն, հետեւողներ չունեցաւ:
Չը խօսելով այդ տեսակ թերթիկների անաշու-
ղութեան մասին հասարակութեան մէջ առհա-
սարակ, բանտարների առողջ խելքը թող չը
տուեց նրանց՝ ոչ խանգարել կանոնաւոր կեան-
քի ընթացքը գործարաններում, և ոչ էլ աշակ-
ցել բամբակագործարաններում կարգի խանգար-
մանը՝ որ և է հաւաքական օգնութեամբ գործա-
դու անողներին: Նոյնքան քիչ աղողութիւն ու-
նեցան սօցիալ-դեմոկրատների հրաւերները և
գործադու անողների չըբանում իր ժամանակին
արված յորդորները և մայրաքաղաքի ոստիկա-
նութեան ու գործարանական տեսչութեան կող-
մից ձեռք առած նպատակայարմար միջոցները՝
կարճ ժամանակում վերացրին ինչպէս աշխա-
տանքների ընդհատումը, այնպէս և գործարանա-
տէրերի և բանտարների մէջ տեղի ունեցած
թերթիկագործիւնների մերձաւոր պատճառները:

Աշխատանքների շուտափոխվել վերսկսվելուն նը-
պաստելու նպատակով՝ քաղաքագետը անձամբ
և անմիջապէս բացատրեց բանտարներին, որ նը-
րանց վարմունքը ապօրինի է, մասնաւորի արեց
այն կանոնը, որը պահպանած ժամանակ միայն
կարող է բաւարարութիւն տրվել նրանց պա-
հանջին, եթէ այդ պահանջը ունի օրինական
հիմք, այլ և այն ճանապարհը, որով կարելի է
խնդրամատուց լինել՝ նոր միջոցներ ձեռք առ-
նելու համար, որոնք ցանկալի են բանտարների
վիճակը բարելոցելու տեսակէտից:

Այդ յորդորների աղողութեանը նպաստեց այն

հեղինակը խօսում է ուսանողների ներքին և
արտաքին կեանքի, նրանց այսպէս կոչված՝ պո-
լիտիկայի և կրօնի, պատուի և բարոյականութեան,
մեղմամարտի, խմելու և սրանց հետ կապված ու-
րիշ գուարճութիւնների մասին. յետոյ անցնելով
ուսանողական ընկերութիւններին՝ խօսում է նը-
րանց նպատակների և ներկայ դրութեան մա-
սին, վերջապէս ուսանողների դէպի քաղաքակա-
նութիւնն ու սօցիալական հարցն ունեցած յա-
րաբերութիւնների մասին և այլն: Երկրորդ
մասում խօսում է համալսարանի և ուսանելու
նպատակի, գիտութեան, պաշտօնի կամ կոչման,
ընդհանուր կրթութեան, ուսանողների՝ կրօնի,
հիկեդեցու, արուեստի և գրականութեան հետ
ունեցած կապի, ուսանողական իդէալիզմի, ըն-
նութեան, դասախօսութիւնների, սեմինարական
պարապմունքների, գրաւոր աշխատանքների և
այլն մասին:

Առաջաբանն այսպէս է սկսվում. «Պարոններ,
զուր վարժվել էք ամբիոնից շարունակ լսել.
բայց լսել մի դասախօսութիւն, որի նիւթը կաղ-
մում էք դուք.— գուցէ ձեզ ծիծաղելի կամ նոյն
իսկ տաղտկալի նորութիւն թիւ. սակայն սա մի
անլսելի նորութիւն չը համարէք. սրանից ճիշդ
200 տարի առաջ Հալլէի նորակառոյց համալսա-
րանում՝ յո. Թ. Օ. մադրիւսը կարդում էր ռուսա-
նոյրների ողորմելի դրութիւնը վերնադրով դա-
սախօսութիւնը, որի մէջ 17-րդ դարու վերջումն
ապրող ուսանողութիւնն այնքան էլ վարդապոյն
կերպով չէ նկարագրված... 1858 թ. նոյն
համալսարանում՝ կարդում էր Է. Էրդմանը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՅ

Հայդելբերգ, յուլիսի 10/22-ին

Պատմական-տնտեսական բարդ հանգամանքնե-
րի հետ զուգընթացաբար աճող սօցիալական հար-
ցը վաղուց է այստեղ օրվայ հրատապ խնդիրնե-
րի շարքն անցել: Բանտար դասակարգը մոռնում
է և իբրեւ մի վիթխարի ուրուական ծածանվում
Գերմանիայի ապագայ զարգացման հօրիզոնի
վրա: Այս ապագան փայլալույզ շատ գլուխներ
օրվայ խնդրեր լուրջ ուշադրութեան առարկայ
են դարձնում: Ի նկատի ունենալով, որ այս հար-
ցի լուծման վերաբերութեամբ գերմանական ու-
սանող և բրիտանացի ուսանողներ թէ ներկա-
յում և թէ հեռավոր ապագայում կոչված է մի
աղեկեցիկ դերկատարելու.— հասկանալի է թէ ին-
չու այդ ուշադրութեան գլխաւոր կէտերից մէկը
կաղմում է ուսանողը և առանձնապէս նրա
յարաբերութիւնը դէպի օրվայ մեծ հարցը:

Թուեմք այդ հարցին ուշադրութիւնը՝ ա-
պացուցանող երեւոյթներից մի քանիսը: Գերմա-
նիայի զանազան համալսարանական քաղաքնե-
րում վերջին ժամանակներս կազմակերպված
«Հասարակագիտական ընկերութիւն-
ներ» (Socialwissenschaftliche vereine). համալ-
սարանի ամբիոնից կարգացված դասախո-

(Կը շարունակվի)

Типографія Канцел. Главнаоч. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. ваз.